ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԱՐՈՆ Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան.

Ի պատասխան Ձեր 11.11.2019թ. հ.01/91Մ գրության՝ Էրեբունի վարչական շրջանի Վարդաշեն 6-րդ փողոցի հ.68ա հանրակացարանային շենքի հ.20 բնակարանի բնակիչ Ալբերտ Վարպետյանի բնակարանային հարցի կապակցությամբ, տեղեկացվում է.

Բարձրացված հարցը բազմիցս ուսումնասիրվել և Ալբերտ Վարպետյանին բնակարան տրամադրելու հարցի հետ կապված վերջինիս մայրիկին՝ քաղաքացի Սիրանուշ Տելյանին տեղեկացվել է, որ քննարկվող բնակարանը հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը: Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման կարգը սահմանված է Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N 41-Ն որոշմամբ:

Տեղեկացվել է նաև, որ Երևանի քաղաքապետարանում համայնքի սեփականություն հանդիսացող համայնքի ենթակայության և տրամադրման տակ գտնվող տարածքների տրամադրումը կարող է իրականացվել գույքի օգտագործման տրամադրման օտարման տարեկան ծրագրով սահմանված կարգի համաձայն: Նշված կարգով բնակարանային պայմանների բարելավման և ապահովման նպատակով բնակարանների ուղղակի տրամադրման գործառույթներ Երևանի քաղաքապետին վերապահված չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ Սիրանուշ Տելյանի կողմից բարձրացված հարցը ներկայացվել է Երևանի ավագանու խմբակցություններին՝ տեղեկացվում է, որ նպատակահարմարության և հիմնավորվածության պարագայում, խմբակցությունները հարցը կարող են սահմանված կարգով ներկայացնել Երևան քաղաքի ավագանու քննարկմանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ